

Ողջուն Համիդա,

Ես Դիանան եմ Երևանից: Ինձ հետաքրքիր էր, թե ինչ նամակ կստանամ, և քո նամակն ինձ անչափ ոգևորեց:

Նախ կցանկանայի կիսվել իմ մտքերով: Դու ճիշտ ես, երբ ասում ես, որ գրում ես մյուս կողմից, որին մենք սովոր ենք թշնամի համարել: Այնուամենայնիվ, ուզում եմ ասել, որ ես անձամբ ադրբեջանցիներին երբեք թշնամի չեմ համարել, գուցե հարևան, որի հետ մեր հարաբերություններն այնքան էլ լավ չեն, բայց ոչ՝ թշնամի:

Հավանաբար, սա կապված է այն փաստի հետ, որ ընտանիքս երբեք ռազմականացված չի եղել, ոչ էլ ունեն կորուստներ կամ անձնական պատմություններ՝ կապված պատերազմի հետ: Սա ինձ միշտ մտորելու տեղիք է տվել, թե ինչ են մտածում մարդիկ սահմանից այն կողմ: Մեր հավաքական մտածողությունը միշտ ստիպել է ատել միմյանց, սակայն ծագումով հայ, ադրբեջանցի գրողի օրինակը, որը դու բերում ես քո նամակում, ապացուցում է, թե ինչպես են ատելությունն ու տարբեր լինելու զգացումները սերմանվում մեր մեջ մանկությունից: Մենք սահմաններ ենք գծել ոչ միայն մեր տարածքների և մարդկանց միջև, այլև՝ մշակույթների, մտածողության և ավանդույթների, սակայն դա ճիշտ չէ:

Ես ցանկանում եմ կիսվել իմ փորձառությամբ, երբ առաջին անգամ Ուկրաինայում՝ միջազգային մի ծրագրի շրջանակներում, հանդիպեցի ադրբեջանցիների: Մեզանից պահանջվում էր ներկայացնել մեր մշակույթը՝ խոհանոցը, պարերը: Ինձ հիացրեց այն փաստը, թե որքան նմանություններ ունենք մենք երգերի, խոհանոցի և նույնիսկ պարերի մեջ: Վերջում պարզվեց, որ թե՛ հայերը, թե՛ ադրբեջանցիները նույն երգն էին պատրաստել իրենց մշակույթը ներկայացնելու համար՝ «Սարի աղջիկ»-ը կամ «Սարի գեղին»-ը ինչպես դուք եք այն անվանում: Այդ պահին մենք, պարզապես, միավորեցինք մեր մշակույթները և մեր երեկոն կոչեցինք «Հայ-ադրբեջանական մշակութային երեկո»: Ես ջերմություն և խանդավառություն զգացի նույն երգը երկու լեզվով էլ երգելիս:

Ես հավատացած եմ, որ եթե ավելի շատ կենտրոնանք մեր նմանությունների վրա տարբերությունների փոխարեն, մենք ի վիճակի կլինենք լսել միմյանց՝ ի վերջո հարթակ ստեղծելով երկխոսության համար: Ես, իհարկե, միամիտ չեմ և հասկանում եմ, որ մեր ժողովուրդները դժգոհություններ ունեն միմյանց նկատմամբ մեր նախնիների կատարած գործողությունների պատճառով. իրականությունն այն է, որ միշտ էլ կլինեն ծայրահեղականներ, որ կփորձեն ռազմական գործողություններ սկսել հոգուտ իրենց, սակայն մենք՝ երիտասարդներս, որ հավատում ենք երիտասարդության ուժին, պետք է գիտակցենք պատերազմի ավերիչ հետևանքները և անենք ամեն բան՝ այն կանխարգելելու համար:

Ուզում եմ ասել, որ Հայաստանում շատ են այն երիտասարդները, որ այս կոնֆլիկտի փոխակերպումը տեսնում են երկխոսության և բանակցությունների մեջ: Հավատացած եմ, որ նույնը Ադրբեջանում է, քանի որ մենք հիմա գրում ենք միմյանց: Դա անհնարին չէ: Դա արդեն պատահել է: Ինձ շատ ոգեշնչեց այն պատմությունը, որը հիմա

ընթերցում են: Գիրքը պատմում է 1980–ականների մասին, երբ Լեռնային Ղարաբաղում հայ–ադրբեջանական ռազմական էսկալացիայի ժամանակ Կիզիլ–Շաֆազի (գյուղ Հայաստանի հյուսիսում) ադրբեջանցի բնակիչները և Քերքենջի (գյուղ Ադրբեջանի կենտրոնում) հայ բնակիչները հանդիպում են սեփական նախաձեռնությամբ՝ բանակցելու իրենց գյուղերի խաղաղ փոխանակման շուրջ: Պատմությունն ինձ համար ապաքաղաքական է: Սա պատմություն է մարդկանց մասին, որոնք հասկացան, թե ինչպես պատասխանատվությունն իրենց ձեռքը վերցնեն՝ առանց զոհերի:

Մինչ մեր կառավարությունները զոհերն են հաշվում սահմանից այն կողմ և պարծենում դրանց թվով, երկու ժողովուրդները հայտնվել են անդադար վախի, կորստի և ցավի թակարդում:

Մենք մեր պատմության կրողներն ենք, բայց նաև՝ նոր պատմություն կերտողները, և ես հավատացած եմ, որ մենք ենք այն փոփոխությունը, որի կարիքը մեր հասարակություններն այնքան շատ ունեն:

Հ.Գ.

Եթե դու, նույնպես, ցանկանում ես կարդալ գիրքը և իմանալ ավելին գյուղերի խաղաղ փոխանակման վերաբերյալ, այն կոչվում է «Ղարաբաղյան կոնֆլիկտից այն կողմ. գյուղերի փոխանակման պատմությունը». այն ստեղծվել է հայ և ադրբեջանցի հետազոտողների համագործակցության արդյունքում:

Անկեղծորեն՝

Դիանա